Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
գիտական խորհրդի 2022թ.մարտի 10 թիվ 81 –Լ որոշում

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔՈԼԵՋԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական Ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հենակետային քոլեջի (այսուհետ՝ քոլեջ) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստանալու համար սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման ավարտական ամփոփիչ ատեստավորման քննությունների կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հուլիսի 21-ի թիվ 638–ն, 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 254-Ն, 2010թվականի հոկտեմբերի 01-ի թիվ 1455-ն հրամանների, այլ իրավական ակտերի և Հիմնադրամի կանոնադրության հիման վրա:

**2.** Սույն կանոնակարգը կարգավորում է ՀՖԿՍՊԻ–ի հենակետային քոլեջի նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստանալու համար սովորողների ընդունելության փոխատեղման տեղափոխման եվ ավարտական ամփոփիչ ատեստավորման գործընթացները*:*

## II. ՔՈԼԵՋԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

1. Քոլեջի ընդունելությունը

1) Քոլեջում նախնական մասնագիտական (արհեստագործական) սովորողների ընդունելությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանված կարգով հաստատված մասնագիտությունների ցանկին համապատասխան՝ մատչելիության, վստահության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ:
2) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիները քոլեջում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստանալու համար ընդունվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրացիների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններով՝ իրենց ընտրությամբ:
3) Օտարերկրացիները՝ իրենց ընտրությամբ քոլեջ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստանալու համար կարող են ընդունվել միայն վճարովի հիմունքներով կամ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով:
4) Քոլեջի նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստանալու համար սովորողների ընդունելությունը անցկացվում է մրցութային հիմունքներով՝ առնվազն հիմնական ընդհանուր կրթություն ունեցող անձանց դիմումների հիման վրա:
5) Սովորողների հետ կնքվում է կրթական ծառայությունների մատուցման պայմանագիր:
6) Արգելվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունների վճարովի համակարգում սովորող, ուսումնառող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի քաղաքացիների նկատմամբ կիրառել ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ ուսումնական հաստատության համանման պայմաններում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ:
7) Հաստատությունն ընդունելությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ Լիազորված մարմին) կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված՝ առկա (ստացիոնար) ուսուցմամբ անվճար և վճարովի տեղերին համապատասխան:
8) Ընդունելության գործընթացը կազմակերպելու նպատակով՝ Լիազորված մարմնի կողմից առկա (ստացիոնար) կամ հեռակա ընդունելության տեղերը հատկացվելուց հետո՝ 5 օրվա ընթացքում Քոլեջի տնօրենի (ռեկտորի) հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմ:

9) Ընդունելության մրցույթն անց է կացվում ըստ մասնագիտությունների՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում գրանցված դիմորդների հայտերի հիման վրա:
10) Մրցույթով անցած յուրաքանչյուր դիմորդի համար կազմվում է անձնական գործ, որտեղ ընդգրկվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 254-Ն հրամանի հավելվածով սահմանված կարգի 19-րդ կետի 3-10-ը ենթակետերով նախատեսված փաստաթղթերը կամ փաստաթղթերի պատճենները:

## III. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

11) Սովորողները իրավունք ունեն վճարովի ուսուցման համակարգից փոխադրվելու անվճար ուսուցման համակարգ.
12) Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:
13) Սովորողների փոխադրումը իրականացվում է սովորողների գիտելիքների գնահատման և անցկացման կանոններին համապատասխան:

## IV. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ

14) Սովորողի տեղափոխումը մեկ ուսումնական հաստատությունից մեկ այլ ուսումնական հաստատություն (այսուհետ՝ տեղափոխում) կատարվում է երկու ուսումնական հաստատությունների տնօրենների համաձայնությամբ:
15) Սովորողի տեղափոխումն առաջին կիսամյակում չի թույլատրվում:
16) հեռակա ուսուցման բաժնից առկա ուսուցման բաժին և առկա ուսուցման բաժնից հեռակա ուսուցման բաժին հիմնական կրթության հիմքով ընդունված Սովորողի տեղափոխումը թույլատրվում է չորրորդ կիսամյակն ավարտելուց հետո, եթե տվյալ կրթական ծրագրի իրականացման ժամկետները համապատասխանում են:

17) Սովորողը տեղափոխման մասին դիմում է ներկայացնում ուսումնական հաստատության տնօրենին՝ նրա գրավոր համաձայնությունը ստանալու համար:
18) Տեղափոխման մասին Սովորողից դիմումն ընդունվում է ուսումնական կիսամյակը սկսելուն նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:
19) Տնօրենը եռօրյա ժամկետում գրավոր պատասխանում է Սովորողին՝ կցելով ակադեմիական տեղեկանքը կամ մերժման դեպքում՝ դրա փաստարկված հիմնավորումները:

20) Անվճար ուսուցման համակարգում ուսումնառած Սովորողի տեղափոխման դեպքում կրթությունը կազմակերպվում է վճարովի հիմունքներով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում արտոնություն ունեցող Սովորողների, որոնց կրթությունը շարունակվում է անվճար հիմունքներով: Տեղափոխված Սովորողը հետագա ուսումնառության տարիներին կարող է օգտվել նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման իրավունքից:
21) Օտարերկրյա ուսումնական հաստատությունից Սովորողի տեղափոխումն իրականացվում է նախարարության թույլտվությամբ և հրամանագրվում է միայն վճարովի ուսուցման համակարգում:
22) Ընդունող ուսումնական հաստատությունում կազմվում է Սովորողի նոր անձնական գործ, որում ընդգրկվում են Սովորողի կրթության մասին վկայող փաստաթուղթը, ակադեմիական տեղեկանքը, ընդունման հրամանի պատճենը և Սովորողի հետ կնքած պայմանագիրը: Սովորողին տրվում է նոր ուսանողական տոմս և նրա հետ կնքած պայմանագրի 2- րդ օրինակը:
23) Ունկնդրի տեղափոխումը կարգավորվում է ունկնդրի և քոլեջի միջև կնքված պայմանագրով:

## V. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

24) Քոլեջում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացած շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգումը կարող է անցկացվել հետևյալ ձևերով.
25) Պետական քննություն մասնագիտական առանձին առարկայից,
26) Պետական քննություն մասնագիտական մի քանի առարկաներից (միջառարկայական քննություն),
27) Դիպլոմային նախագիծ,
28) Դիպլոմային աշխատանք,
29) Առանձին առարկայից պետական քննությունն անց է կացվում հարցատոմսերով, որոնք ներառում են տվյալ առարկայի հիմնական բովանդակությանը համապատասխան հարցեր,
30) Պետական միջառարկայական քննությունն անց է կացվում հարցատոմսերով: Այդ հարցատոմսերը ներառում են առանձին մասնագիտական առարկաների հիմնական բովանդակությանը համապատասխան հարցեր, որոնք բխում են տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված շրջանավարտի որակավորման բնութագրից,
31) Պետական քննությունները կարող են անցկացվել բանավոր, գրավոր, թեստային, գործնական աշխատանքների, իրավիճակային խնդիրների դրանց համակցված և այլ ձևերով,

32) Դիպլոմային նախագիծը կամ դիպլոմային աշխատանքը կոչված է համակարգելու և ամրապնդելու շրջանավարտների գիտելիքներն ու կարողությունները և, որպես կանոն, պետք է ունենա գործնական նշանակություն՝ մասնագիտությունից որոշակի խնդիր(ներ) լուծելու առումով:
33) Դիպլոմային նախագծի (աշխատանքի) թեմաները սահմանվում են մասնագիտական ուսումնական հաստատության կողմից՝ հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները կամ նրա զարգացման միտումները: Դիպլոմային նախագծի (աշխատանքի) նախապատրաստման ընթացքում ուսումնական հաստատության տնօրենի հրամանով յուրաքանչյուր շրջանավարտին կցվում է ղեկավար(ներ), իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև խորհրդատու(ներ):
34) Դիպլոմային նախագիծը (աշխատանքը) ենթակա է գրախոսման:

## VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

35) Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2022թվականի մարտի 10-ից:
36) Սույն կանոնակարգի փոփոխությունները և լրացումները կատարվում են ՀՖԿՍՊԻ–ի Գիտական խորհրդի կողմից:
37) Սույն կանոնակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: